

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԸ  
ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ WORLD VISION-Ի ԱՇԽԱՏԱՆԻՍՏԻՆ

Թեմիս Առաջնորդարանը իր սերտ յարաբերությունը կը պահպանէ եւ կը համագործակցի World Vision բարեսիրական կազմակերպութեան հետ:

Հինգշաբթի, Մայիս 14ի առաւօտուն Սրբազան Հայրը պատուիրակութեամբ մը, որուն մաս կը կազմէին Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճար Ծ. Վրդ. Եարպըմեան, Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Արովեան, Առաջնորդարանի Վարիչ Տնօրէն՝ Տիար Յարութ Մարգարեան, Գրադարանի Պատասխանատու՝ Տիար Հայկ Մարոյեան, Կրօնական Դաստիարակութեան Վարիչ՝ Տիար Մաշտոց Զօպանեան, Տիկնանց Միութեան Կեդրոնական Վարչութեան Արեւնապետուհի՝ Տիկին Արաքսի Պոյամեան եւ Էջմիածնի Փոքրիկներու Հիմնադրամի Յանձնախումբի Արեւնապետուհի՝ Տիկին Գայիանէ Թաթուլեան, մեկնեցան Սոնրովիա World Vision-ի կեդրոնը՝ մասնակցելու համար ծրագրուած յարուկ աշխատանիստի (workshop):

World Vision-ի կողմէ բարի գալուստ մաղթեցին Պիլ Գլիվըր, Ժան Պուշէպէլ: Ներկաները ծանօթացուցին իրենք վիրենք: Բացման աղօթքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Սոյն աշխատանիստի նպատակին մասին անդրադարձաւ Ճէմս Սանչէզ: World Vision-ի գործունէութիւններու մասին Ռէնտի Սթրաշ խօսեցաւ U.S. Strategy Director for Emergency Response, իսկ Ֆիլիս Ֆրիմըն խօսեցաւ Domestic Disaster Response նիւթի շուրջ: Ճաշի ընթացքին տեղի ունեցաւ հարց ու պատասխանի պահ մը: Տրուեցաւ այս հանդիպման եզրակացութիւնը եւ նկատի առնուեցան յառաջիկայ քայլերը: Փակման խօսքը կատարեց Ժան Պուշէպէլ:

Հարկ կը վզանք յայտնել, թէ ժողովի ընթացքին տեղեկութիւններ տրուեցան տեղական աղէտներու պարագային պատրաստ գործուելու մասին: Արեւմտեան Թեմը իր օժանդակութիւնը պիտի բերէ նման դէպքերու պարագային: Խօսուեցաւ նաեւ Հայաստանի World Vision-ի կեդրոնի գործունէութիւններու մասին, ինչպէս նաեւ աղէտի պարագային Արեւմտեան Թեմի օժանդակութեան շուրջ: Անդրադարձ եղաւ Արեւմտեան Թեմի եւ World Vision-ի համագործակցութեան, եթէ հարկ ըլլայ միասնաբար օգնութեան ձեռք երկարելու տեղեկական աղէտի եւ կամ Հայաստանի մեր հայրենակիցներուն աջակցութիւն ցուցաբերելու կարելիութեան մասին: